ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ
УПРАВЛЕНИЕ

N 01-120
02 11 2011թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ուղարկում ենք Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից հոկտեմբեր ամսվա ընթացքում արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները :

Առ դիր՝ 8 թերթ :

Ոսկեհատ համայնքի
ղեկավար

Գ. Ներսիսյան

10347-11
02 11 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

14 հոկտեմբերի 2011թ N 11 -Ա

## ՈՍԿԵՀԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՏՆՕՐԵՆ ՍՐԲՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158- րդ, 159- րդ և 164- րդ հոդվածներով և հիմք ընդունելով Սրբուհի Սիմոնյանի դիմումը

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի բժշկական ամբուլատորիայի տնօրեն Սրբուհի Սիմոնյանին հատկացնել իրեն հասանելիք 2011 թվականի ամենամյա հերթական արձակուրդը 2011 թվականի հոկտեմբերի 14-ից՝ 22 աշխատանքային օր տևողությամբ :
2. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի նոյեմբերի 15–ից
3. Տնօրենի պարտականությունները արձակուրդի ընթացքում դնել Աստղիկ Նաղանյանի վրա :

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

2011 թվականի հոկտեմբերի 14
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 հոկտեմբերի 2011թ. N 12 -Ա

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 126- րդ հոդվածով և հիմք ընդունելով Ոսկեհատի գյուղական համանքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 2 որոշումը

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ`

1. Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորման ձևով վերակազմակերպված համայնքային հիմնարկի տնօրենին տեղափոխման կարգով նշանակել իր զբաղեցրած պաշտոնում . Խաթուն Հակոբյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի « Ոսկեհատի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության :
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Ոսկեհատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Սիլվա Առաքելյանին :
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր` Գ. Ներսիսյան

2011 թվականի հոկտեմբերի 31
գ. Ոսկեհատ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8

«21» 10 2011թ.

գ. Ոսկեհատ

# ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՄԱՅԻՍ, ԱՇՈՏ, ԱՐՍԵՆ, ԱՆՆԱ, ՍԵԴԱ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ և ԱՆԱՀԻՏ ԹԱՐՓՈՇՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Արմավիր մարզի, Ոսկեհատ գյուղի բնակիչ Արամայիս Մանուկյանը դիմել է, Արմավիրի մարզ, գ.Ոսկեհատ, Գայի փողոց թիվ 8 հասցեում գտնվող բնակելի տնամերձ օրինական 1000.0քմ օրինական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը և շենք-շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և նույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում ինքնակամ

հաստատող փաստաթղթերը չփախպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Վերականգնել Արմավիրի մարզ, գ.Ոսկեհատ , Գայի փողոց թիվ 8 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Արամայիս, Աշոտ, Արսեն, Աննա, Սեդա Մանուկյանների և Անահիտ Թարփոշյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1000.0քմ օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ:

2.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3.Շենքի-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:

4.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Արամայիս Աշոտ, Արսեն, Աննա, Սեդա Մանուկյանների և Անահիտ Թարփոշյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

«24» հոկտեմբերի 2011 թ. թիվ 9 -Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ « ՈՍԿԵՀԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով , « Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով `

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ`

1. ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատի համայնքի մանկապարտեզ հիմնարկը վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համանքի « Ոսկեհատի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպություն :
2. Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է :
3.Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում:
4.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համանքի « Ոսկեհատի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն սեփականության իրավունքով հանձնվող , օգտագործման իրավունքով ամրացվող , համայնքին պատկանող գույքի կազմն ու արժեքը ` համաձայն հավելվածի :
5 Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համանքի « Ոսկեհատի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպութան փոխանցման ակտը ` համաձայն հավելվածի :
6.ՀՀ քաղաքացի Խաթուն Հակոբյանը ( անձնագիր AF 0578644, տրված 29.01.2003թ. բնակվող Ոսկեհատ գյուղի Մաշտցի թիվ 16 հասցեում ) լիազորվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համանքի « Ոսկեհատի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը , այլ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ներկայացնել գրանցման Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Վաղարշապատի տարածքային բաժին :
7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Ոսկեհատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Սիլվա Առաքելյանին :
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր ` Գ. Ներսիսյան

2011 թվական հոկտեմբերի 24
գ. Ոսկեհատ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ոսկեհատի
գյուղական համայնքի ղեկավարի 24
հոկտեմբերի 2011 թ. թիվ 9- Ա որոշմամբ
Համայնքի ղեկավար՝

Գ. Ներսիսյան

24.10.2011 թ.

Հավելված 2

# ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի « Ոսկեհատի Մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի

Հիմնական միջոցներ

| Հ/Հ | Անվանումը | քանակը | Տարեթիվը | Հիմն. միջ. սկզբնական արժեքը /դր/ | Մնացորդային արժեքը /դր/ |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1 | Դաշնամուր | 1 | 1989 | 32.065 | 0 |
| 2 | Պլիտա խոհանոցի էլ. | 1 | 2005 | 102.000 | 40.800 |
| 3 | Պլիտա խոհանոցի գազի | 1 | 2005 | 42.000 | 16.800 |
| 4 | Սառնարան | 1 | 2005 | 130.000 | 52.000 |
| 5 | Սեղան մանկական | 12 | 2005 | 111.000 | 49.500 |
| 6 | Սեղան խոհարարական | 3 | 2005 | 45.000 | 18.000 |
| 7 | Բազմոց կաշվից | 2 | 2005 | 30.000 | 12.000 |
| | Ընդամենը | | | | 189.100 |

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ոսկեհատի
գյուղական համայնքի ղեկավարի 24
հոկտեմբերի 2011 թ. թիվ 9-Ա որոշմամբ
Համայնքի ղեկավար

Գ. Ներսիսյան
24.10.2011 թ.

Հավելված 3

# ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի « Ոսկեհատի Մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի

## ՓՈՔՐԱՐԺԵՔ ԵՎ ԱՐԱԳԱՄԱՇ ԱՌԱՐԿԱՆԵՐ

| | | քանակը | Տարեթիվը | Հիմն. միջ. սկզբնական արժեքը /դր/ | Մնացորդային արժեքը /դր/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մահճակալ մանկական | 40 | 2005 | 600.000 | 240.000 |
| 2 | Ներքնակ մանկական | 40 | 2005 | 280.000 | 112.000 |
| 3 | ծածկոց մանկական | 40 | 2005 | 160.000 | 64.000 |
| 4 | բարձ մանկական | 40 | 2005 | 80.000 | 32.000 |
| 5 | սավան մանկական | 40 | 2005 | 36.000 | 14.400 |
| 6 | պաղադյալնիկ | 40 | 2005 | 60.000 | 24.000 |
| 7 | բարձի երես | 40 | 2005 | 12.000 | 4.800 |
| 8 | թեյի սրբիչ | 7 | 2005 | 1.400 | 600 |
| 9 | պղինձ ճաշի | 6 | 2005 | 41.000 | 16.400 |
| 10 | թավա մեծ | 1 | 2005 | 7.000 | 2.800 |
| 11 | թավա փոքր | 1 | 2005 | 5.000 | 2.000 |
| 12 | փլաֆքամիչ | 1 | 2005 | 2.000 | 1.800 |
| 13 | դանակ մեծ | 4 | 2005 | 2.000 | 1.800 |
| 14 | գդալ ճաշի | 48 | 2005 | 4.800 | 2.000 |
| 15 | գդալ թեյի | 30 | 2005 | 1.200 | 500 |
| 16 | պատառաքաղ | 48 | 2005 | 4.800 | 2.000 |
| 17 | դանակ փոքր | 18 | 2005 | 700 | 300 |
| 18 | շերեփի կոմպլեկտ | 2 | 2005 | 3.000 | 1.200 |
| 19 | թեյնիկ | 5 | 2005 | 27.000 | 10.800 |
| 20 | կշեռք | 1 | 2005 | 9.000 | 3.600 |
| 21 | աթոռ մանկական | 42 | 2005 | 48.000 | 19.200 |
| 22 | աթոռ մեծ | 6 | 2005 | 12.000 | 4.800 |
| 23 | ժամացույց | 2 | 2005 | 3.000 | 1.200 |
| 24 | թեյի բաժակ | 46 | 2005 | 12.500 | 5.000 |
| 25 | ափսե զակուսկի | 48 | 2005 | 9.500 | 3.800 |
| 26 | ափսե ճաշի | 42 | 2005 | 14.400 | 5.800 |
| 27 | ափսե փոքր | 12 | 2005 | 2.400 | 1.000 |
| 28 | մատուցարան | 4 | 2005 | 3.000 | 1.200 |
| 29 | վարագույր | 18 | 2005 | 18.000 | 7.200 |
| 30 | կառնեզ | 16 | 2005 | 24.000 | 9.600 |
| 31 | խաղալիքներ | 40 | 2005 | 23.200 | 9.300 |
| 32 | պահարան | 6 | 2005 | 42.000 | 16.800 |
| 33 | պահարան սրբիչի | 3 | 2005 | 15.000 | 6.000 |
| 34 | պահարան հագուստի | 4 | 2005 | 24.000 | 9.600 |
| | Ընդամենը | | | 1.587.900 | 637.500 |

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ոսկեհատի
գյուղական համայնքի ղեկավարի 24
հոկտեմբերի 2011 թ. թիվ 9- Ա որոշմամբ
Համայնքի ղեկավար՝

______________Գ. Ներսիսյան
24.10.2011 թ.
Հավելված 4

# ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի « Ոսկեհատի Մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցվող իրավունքների , պարտքերի և պարտավորությունների

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | դեբիտորական պարտք /դրամ/ | Կրեդիտորական պարտք /դրամ/ |
|---|---|---|---|
| | | - | - |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Տնօրեն՝ Խ. Հակոբյան

Հաշվապահ՝ Գ. Խաչատրյան